



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1776

232

Z-61

1852

1776

ՅԻՍՈՒՍԻ ՆԱՅԻՆՔ

ԵԲԲ. ԺԲ. 2.



معارف عمومیہ نظارت جلیلہ سنک ۲ ربیع الاول ۳۰۳
و ۲۶ تشرین ثانی ۳۰۱ تاریخہ مجلی و ۸۲۲ نومروی
رخصتنامہ سیلہ نشر اولئشدر

مصارفی آمریقان مسیونر شرکیہ طرفندن تسویہ اولئدرق
طبع اولئشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԻՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՅՅԱՃԵԱՆ

232
Z-61

1892

9010

18571
232
2-61
W
“ՅԻՍՈՒՍԻ ՆԱՅԻՆՔ”

ԵՐՐ . ԺԲ . 2 :



Միայն երկու բառերէ բաղկացեալ խօսք է այս, բայց անոր մէջ կը պարունակի կենաց ամբողջ գաղտնիքը :

«Յիսուսի նայինք» Սուրբ Գրոց մէջ, սորվելու համար թէ ո՛վ է Նա, ի՛նչ ըրած է մեզ համար, ի՛նչ կը շնորհէ մեզ, եւ ի՛նչ կը պահանջէ մենէ, օրպէս զի օրինակ առնունք անոր բնաւորութենէն, հրահանգութիւնք անոր վարդապետութեամբ, անոր պատուիրաններն ընենք մեր օրէնքը, անոր խոստումները՝ մեր մխիթարութիւնը, անոր անձին եւ գործոյն մէջ գտնենք յազուրդ մեր հոգիներուն բոլոր կարօտութեանց :

«Յիսուսի նայինք» որ խաչուեցաւ, զրտնելու համար անոր թափած արեան մէջ

2001



6209-57

մեր մեղաց փրկանքը, մեր թողութիւնը եւ խաղաղութիւնը :

«Յիսուսի նայինք» որ յարեաւ ի մեռելոց, գտնելու համար անով այն արդարութիւնը որով միայն կ'արդարանանք, եւ ուրով թոյլ կը արուի մեզ ամենուս, որ ենք անարժան, մօտենալ վստահութեամբ, անոր անուշով, Անոր Հօր եւ մեր Հօր, Անոր Աստուծոյն եւ մեր Աստուծոյն :

«Յիսուսի նայինք» որ է փառաւորեալ, գտնելու համար յանձին Նորա մեր երկնաւոր Բարեխօսը, որ իւր միջնորդութեամբ կը կատարէ իւր ողորմութեան եւ մեր փրկութեան գործը, որ այժմ իսկ «մեզի համար Աստուծոյ առջեւ կը ներկայանայ,» եւ կը լեցունէ մեր աղօթից թերին՝ իւր բարեխօսութեան զօրութեամբ որուն միշտ կը լսէ Հայրը :

«Յիսուսի նայինք» որ յայտնուած է Հոգւով Սրբով, որպէս զի անոր հետ հաղորդակցութիւն հաստատելով մաքրուին մեր ապականեալ սիրտերը, լուսաւորուին

մեր խաւարեալ իմացողութիւնները, փոխուին մեր ապստամբ կամքերը, որպէս զի կարող ըլլանք յաղթանակ կանգնել աշխարհի եւ չարին յարձակմանց վրայ, ընդդիմանանք անոնց բռնութեանց Յիսուսով որ է մեր զօրութիւնը, ի դերեւ հանենք անոնց խորամանկութիւնները Յիսուսով որ է մեր իմաստութիւնը, զօրանալով կարեկցութեամբն Յիսուսի որ կրեց ամէն փորձութիւն, եւ օգնութեամբն Յիսուսի որուն ոչ ոք յաղթած է :

«Յիսուսի նայինք» որ ինչպէս կու տայ թողութիւն մեզայ՝ նոյնպէս կու տայ զղջումն, ստանալու համար շնորհք ձանչնալ մեր մեղքերը, ողբալ անոնց վրայ, խոստովանիլ զանոնք եւ հրաժարիլ անոնցմէ :

«Յիսուսի նայինք» ընդունելու համար անկէ մեր օրըստօրէական գործը, եւ աւօրեայ խաչը, նաեւ անոր շնորհքը որ բաւական է կրելու համար խաչը եւ կատարելու համար գործը. համբերող ըլլալու

համար տեսնելով անոր համբերութիւնը եւ գործունէութիւնը, եւ ունենալու համար սէր՝ տեսնելով անոր սէրը, ոչ խորհելով թէ ի՛նչ կրնամ ես ընել, բայց թէ ի՛նչ կրնայ ՚ա ընել, եւ ապաւինելով անոր գորութեան որ «տկարութեան մէջ կը կատարուի»:

«Յիսուսի նայինք» ուրանալու եւ մոռանալու համար մեր անձը, որպէս զի փարատի մեր խաւարը անոր երեսաց լուսով, որպէս զի նուիրական ըլլան մեր ուրախութիւնք եւ զսպուին մեր տրտմութիւնք, որպէս զի նա խոնարհեցունէ զմեզ եւ բարձրացունէ զմեզ, որպէս զի տրտմեցունէ զմեզ եւ մխիթարէ զմեզ, որպէս զի աղքատացունէ զմեզ եւ հարստացունէ զմեզ, որպէս զի սորվեցունէ մեզ աղօթել եւ պատասխանէ մեր աղօթից, որպէս զի մինչ կը թողու զմեզ աշխարհի մէջ բաժնէ զմեզ աշխարհէն, մեր կեանքը պահուած ըլլալով անոր հետ Աստուծոյ քով, եւ մեր վարքը անոր վկայ ըլլալով մարդոց առջեւ:

«Յիսուսի նայինք» որ դարձեալ գացած ըլլալով իւր Հօր տունը, հոն մեզ համար սեղ կը պատրաստէ, որպէս զի այս օրհնեալ յոյսը քաջալերէ զմեզ ապրիլ առանց արտոնջելու, եւ պատրաստէ զմեզ մեռնիլ առանց ցաւելու, երբ գայ այն օրը, զի մաւորել վերջին թշնամին, այսինքն՝ մահը, զոր յաղթած է նա մեր կողմանէ եւ զոր մենք պիտի յաղթենք անոր ձեռքով, այն թշնամին՝ զոր ըրաւ մեզ բարեկամ եւ որ երբեմն էր զարհուրանաց թագաւոր, իսկ այժմ է հրեշտակ եւ պատգամաւոր յաւիտեանական խաղաղութեան:

«Յիսուսի նայինք» որ դարձեալ պիտի գայ անշուշտ, թէպէտ յայտնի չէ թէ ե՛րբ, եւ որուն գալստեան յուսով կը սպասէ անոր հաւատարիմ եկեղեցին, որ կը համբերէ, կը հօկէ եւ կը ցնծայ մտածելով թէ «Տէրը մօտ է»:

«Յիսուսի նայինք» որպէս զի սորվեցունէ մեզ՝ նայիլ իրեն, որ է ինչպէս առարկայ նոյնպէս եւ Առաջնորդ մեր հաւատ-

քին, որ ինքն է նաեւ կատարողը մեր հաւատքին, եւ որպէս զի պահէ զմեզ այն հաւատքին մէջ մինչեւ ցվախճան:

«Յիսուսի նայինք» եւ ոչ ուրիշի, ինչպէս լռելեայն կը հասկցունէ մեր բնաբանը, որ կ'ըսէ մեզ իսկոյն անոր վրայ հաստատել մեր աչքերը եւ դարձունել զանոնք բոլոր ուրիշ բաներէն: Յիսուսի նայինք եւ ոչ մեր անձերուն, մեր խորհուրդներուն, մեր տրամաբանութիւններուն, մեր երեւակայութեանց, մեր փափաքանաց, մեր գաղափարաց: Յիսուսի եւ ոչ աշխարհի կամ անոր ցանկութեանց, օրինակներուն, սկզբունքներուն, գաղափարներուն: Յիսուսի՝ եւ ոչ Սատանային, թէպէտ աշխատի նա վախցունել զմեզ իւր արհաւրօք կամ հրապուրել զմեզ իւր շողօքորթութիւններով:

Յիսուսի՝ եւ ոչ մեր կրօնական դրութեանց, թէպէտ անոնք ըլլան Աւետարանական: Հաւատքը որ կը փրկէ, որ կը սրբացունէ, եւ որ կը մխիթարէ, չէ հա-

ւանութիւն տալ փրկութեան վարդապետութեան, այլ՝ յարիլ Փրկչին Անձին: Բաւական չէ միայն ճանչնալ զՅիսուս Գրիստոս, այլ հարկ է ունենալ զնա. եւ ոչ ոք կը ճանչնայ զնա ճշմարտիւ եթէ չստանար զնա անյապաղ: Ըստ խորիմաստ բանից սիրելի աշակերտին, «Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր»:

Յիսուսի՝ եւ ոչ մեր յոյժ սիրելի եւ յոյժ օրինաւոր վայելից, զի մի գուցէ այնպէս գերի ըլլանք անոնց զի մեր աչաց տեսութեանէն արդելուն մինչեւ իսկ զԱյն որ մեզ կը շնորհէ զանոնք:

Յիսուսի՝ եւ ոչ մեր զօրութեան: Մեր զօրութիւնը կը նպաստէ մեր փառաւորութիւնն միայն, զԱստուած փառաւորելու համար հարկ է Աստուծմէ՛ ստանալ զօրութիւն:

Յիսուսի՝ եւ ոչ մեր տկարութեան: Ողբալով մեր տկարութեանց վրայ, միթէ երբեք եղած ենք աւելի զօրաւոր: Յիսուսի նայելով մեր սիրտերը պիտի մաս-

նակցին անոր զօրութեան եւ մեր շըր-
թունք պիտի զովաբանեն զՆա :

Յիսուսի՛ եւ ոչ (եթէ զայս ըսել հարկէ) մեր արդարութեան , զոր կը կեղծենք թէ ունինք : Բուն հիւանդն այն է որ , թէպէտ հիւանդ է , կը համարի զինքն առողջ . բուն կոյրն այն է որ , թէպէտ կոյր է , կը համարի թէ պայծառ կը տեսնէ : Եթէ վտանգաւոր է շատ մտածել մեր թշուառութեան վրայ , մեր՛ որ , աւա՛ղ , իրօք ենք թշուառ , եւս առաւել վտանգաւոր է հանդարտ եւ անխռով մնալ մեր երեւակայական արժանեաց վրայ :

Յիսուսի՛ եւ ոչ Օրէնքին : Օրէնքը հրամաններ կ'ընէ մեզ եւ շտար կարողութիւն հնազանդիլ անոնց : Օրէնքը միշտ կը դատապարտէ եւ բնաւ չներեր : Բայց Յիսուս է « օրէնքին վախճանը ամէն հաւատացեալին արդարութեան համար » :

Յիսուսի՛ եւ ոչ սրբութեան աստիճանին որուն հասած ենք թերեւս : Եթէ ոչ ոք հաւատալու է թէ ինքն է Աստուծոյ որ-

զի մը ցորչափ կը տեսնէ արատներ իւր սրտին մէջ , եւ թերութիւններ՝ իւր կենաց մէջ , ո՛վ ուրեմն կարող է առնուր փրկութեան ցնծալից ճաշակը : Բայց այս ցնծութիւնը չգտնուիր այս կերպով : Սըրբութիւնը մեր փրկութեան պտուղն է եւ ոչ արմատը : Այն է Յիսուս Քրիստոսի գործը զոր կ'ընէ մեզ համար եւ որ կը հաշտեցունէ զմեզ Աստուծոյ հետ : Այն է Հոգւոյն Սրբոյ գործը մեր մէջ որ կը նորոգէ զմեզ անոր պատկերին : Այն է անոր անփոփոխ խոստման ստուգութիւնը , որ կ'երաշխաւորէ յաւիտենական կեանք բոլոր անոնց որ կ'ապաւինին անոր : Հաւասարապէս ստոյգ է թէ Փրկչին ապաւինիլ ստոյգ ճամբան է անոր հնազանդելու կատարելապէս , եւ միայն մեղաց թողութեամբ խաղաղութիւն ունենալով հոգին կ'ըլլայ զօրաւոր իւր պատերազմին մէջ : Եթէ կան այնպիսիք որ կ'եղծանեն այս օրհնեալ ճշմարտութիւնը որպէս զի առանց խղճահարութեան տան զիրենք հոգեւոր

թուլութեան, եւ կ'արդարացունեն զիրենք ըսելով թէ ունին հաւատք որով կը կարծեն թէ կրնան արհամարհել սրբութիւնը զոր չունին, պարտին յիշել Սրբոյն Պօղոսի վսեմ խօսքը. «Անոնք որ Քրիստոսին ներն են՝ իրենց մարմինը խաչ հանեցին բնական կիրքերով ու ցանկութիւններով մէկտեղ,» եւ Սրբոյն Յովնաննու խօսքը. «Ան որ կ'ըսէ թէ ես անիկա ճանչցայ, ու անոր պատուիրանքները չպահեր, ստախօս է, եւ անոր մէջը ճշմարտութիւն չկայ,» Պարտին յիշել նաեւ թէ ինչ կ'ըսէ նոյն ինքն Յիսուս. «Ամէն ծառ որ բարի պտուղ չբերեր, կը կտրուի ու կրակը կը ձգուի:»

Յիսուսի՝ եւ ոչ մեր հաւատքին: Թշնամին, երբ չկրնար ուրիշ տեղ նայիլ տալ մեզ, կը գործածէ վերջին միջոց մը եւս. եւ այն է դարձունել մեր աչքերը մեր Փրկչէն դէպի մեր հաւատքը, եւ այսպէս վհատեցունել զմեզ, եթէ տկար է մեր հաւատքը, եւ հպարտացունել՝ եթէ զօ-

րաւոր է այն. որպէս զի թէ՛ այս եւ թէ՛ այն կերպով տկարացունէ զմեզ:

«Յիսուսի նայինք» հիմ, եթէ տակաւին բնաւ նայած չենք անոր: Յիսուսի նայինք վերստի, եթէ դադարած ենք անոր նայելէ: Նայինք Յիսուսի հիմ, Յիսուսի հիմ, Յիսուսի հիմ: Նայինք հետ զհետէ եւս առաւել վստահութեամբ, եւ «նոյն պատկերին կը նորոգուինք փառաց ի փառս.» եւ այսպէս սպասենք այն ժամուն երբ Նա պիտի կոչէ զմեզ անցնիլ երկրէս երկինք, ժամանակէն՝ յաւիտենականութիւն: Սպասենք այն խոստացեալ ժամուն, այն օրն՝ նեալ ժամուն, երբ ի վախճանի «Անոր պէս պիտի ըլլանք. վասն զի անիկա պիտի տեսնենք՝ ինչպէս որ է:»




«Ազգային գրադարան»



NL0028611

1776

110



1722